# ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

1. *Կանոն Հրաշափառ Ծննդեան Տիրուհւոյ Կուսին Մարիամու ի Յովակիմայ և յԱննայէ. 8 գրական արտադրութիւն**) *կամ շարական. 1588-ում բոլորն էլ գրուած են արձակ, ապա ուրեմն նոր են. միայն Նոր Սիոն ծնեալ մանկունքի փոխարէն ակ. հր. Ուրախացիր հանդիսարան. տէքստը սրանի. 3b. տպագրինը լրիւ գրի է առնուած 202-ի B հատուածում. չկայ և չի եղել 202 A-ում.*

2. *Կանոն Յովակիմայ և Աննայի՝ ծնողաց սրբոյ Աստուածածնին. 7 շարական. բոլորն արձակ—նոր. 202 B. չի եղել և չկայ 202 A-ում.*

3. *Կանոն Աւետեաց սուրբ Աստուածածնին. 8 շար., արձակ—նոր. չկայ նոյնիսկ 202 B-ում. 202 A-ում նոյն խորագրի տակ ուրիշ շարականներ են.*

4. *Կանոն Աստուածայայտնութեան ճրագալուցին. 8 շար., բոլորը կրճատ—հին. բացի մեծացուսցէքից, որ արձակ—նոր է. 202 A-ի սկզբից թերթեր են ընկել, ուստի և չկայ. եղել է. 202 B չի լրացնում։*

5. *Կանոն ծննդեան Քրիստոսի Առաջնոյ աւուր. 8 շար., բոլորը կրճատ—հին. բացի Այսօր ցնծան երկինք ի վերուստից, որ արձակ—նոր է. վերջի չորս այլ շարականներ 10a—11a արձակ—նոր, այժմ անգործածական. 202 A թերթեր են ընկած, եղել է. 202 B չի լրացնում։*

6. *Կանոն Երկրորդի աւուրն. 7 շար., բոլորը կրճատ—հին։ 202 A եղել է. B չի լրացնում։*

7. *Կանոն Երրորդի աւուրն. 7 շար. բոլորը կարճ—հին։ 202 A եղել է. B չի լրացնում.*

8. *Կանոն Չորրորդի աւուրն. 7 շար. բոլորը կարճ—հին։ 202 A եղել է, B չի լրացնում։*

9. *Կանոն Հինգերորդի աւուրն. 7 շար. բոլորը կրճատ—հին. Անթառամ ծաղիկից առաջ կայ արձակ—նոր երկու այլ շարական 13b։ 202 A եղել է, B չի լրացնում։*

10. *Կանոն Վեցերորդի աւուրն. 7 շար. բոլորը կրճատ—հին։ 202 A եղել է. B չի լրացնում։*

---

*) Այստեղ եւ ամենուրեք օրհնութեան երկրորդ եւ յաջորդ բաղկացուցիչ մասերը, որոնց առաջ տպագրում գրուած է + նշանը, մենք համարում ենք երբեմնեան ինքնուրոյն գրական արտադրութիւններ. Հմմտ. Das armenische Hymnarium, էջ 2—5.

11. *Կանոն Եօթներորդի աւուրն.* 8 *չար., կրճատ—հին.* 202 A-*ում կայ.*

12. *Կանոն Ութերորդի աւուրն.* 8 *չար., կրճատ—հին.* 202 A-*ում կայ։*

13. *Մեծացուցէք Յարութեան Տեառն.* 22 *չար. բոլորն էլ կրճատ—հին բացի՝ Ով գերահրաշ ծաղիկից, որ արձակ է գրուած* 17b. *կան նաև բազմաթիւ կրճատ ու արձակ գրուած և այժմ անգործածական չարականներ.* 16a—24a. 202-*ում չկան՝ Ով գերահրաշ ծաղիկ և Ի քեզ եմք ապաւինեալ։ Վերջին չարականիս առթիւ գիտելի է. մեծացուցէները վերջացնելուց յետոյ* 202 A *և* 1588 *գրի են առել Կանոնը Աւետեաց Աստուածածնին. ինչպէս մի փոքր առաջ* (3) *ասացինք՝ այստեղ ուրիշ չարականներ են և ոչ մեր արդի կանոնինը.* 202 A-*ում գրուած են. ա) Ուրախ լ մարի ս՞ր ՞ածած որ յորովի քում կրեցեր... բ) Անարատ կ։ Ըգքեզ երկ։ Երխ։ գ) Ածածին մայր լ։ Ըգք. ան. հ. Որ արար... դ) Ուրախացիր ՞ած։ Երանելից։ Բերովբէ։ ե) Ճչէ. Ի քեզ եմք ապաւ՞քի մայր ա՞յ մ.։ Սոյն ա-դ չարականները կրճատ գրել է նաև* 1588-*ը նոյն վերնագրի տակ* 24a-b, *իսկ Ի քեզ եմք ապաւինեալն առել է մեծացուցէների վերջը* 23b։ *Պարզ է, որ այս է Աւետեաց հին կանոնը. նորն անյայտ է* 202-*ի թէ* A *և թէ* B *հատածներին, որոնք գրուած են* 1312 *թուին։*

14. *Կանոն Քառասնօրեայ Գալստեան Տեառն ի տաճարն.* 10 *չարական. ամբողջը կրճատ—հին.* 202 A *ունի։*

15. *Կանոն Անտոնի անապատականի.* 6 *չար. բոլորը կրճատ—հին, բացի Որ ի հանդէս քո ճգնութիւնից, որ արձակ—նոր է. ամենայն ուշադրութեան արժանի են նաև երկու այլ, արձակ գրուած, չարականներ մեր Նախասկիզբն միանձանցից առաջ* 30b—31a, *որոնց առթիւ մենք ուրիշ անգամ կը խօսենք. արդի կանոնը կայ* 202 A.

16. *Կանոն սրբոյն Թէոդոսի թագաւորին.* 6 *չարական* = 1588-*ի կանոն սուրբ թագաւորացն. արձակ—նոր են մի միայն Որ զերկնաւորն ու Որ զարդարեալը, մնացեալը կարճ—հին.* 202 A։

17. *Շարական Տրդատայ թագաւորին.* 1 *չարական.* 1588՝ *Կանոն Տրդատայ սուրբ թագաւորին ունի* 32a—33b *հինգ չարական, բոլորն էլ արձակ—նոր. սոցա մէջն ու դարձեալ մանկունք է և արձակ գրուած մեր արդի Որ գերագոյնը.* 202 A *ունի մի միայն Որ գերագոյնը, այն էլ առանց խազագրի։*

18. *Կանոն Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն.* 6 *չարական. ամբողջը կրճատ—հին.* 202 A։

19. *Կանոն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային.* 8 *չարական. ամբողջը կրճատ—հին. Առաքեալ և Նախավկայից յետոյ* 1588 *ունի նաև Մարտիրոս և վկայ ՞քի* 34b *արձակ—նոր, որ այժմ մի միայն*

*Ստեփաննոս Ուլնեցունն է, ինչպէս և վայել է ըստ Կլուսաւորեցեր զորդիս Թորգոմայ» բանեբի:* 202 A.

20. *Կանոն Պետրոսի և Պօղոսի՝ գլխաւոր առաքելոցն.* 7 *շարական. Ցնծայ այսօր եկեղեցի արձակ—նոր. Որ զերագոյն ընտրելոց. նոյնպէս. Որ խոստացար տալ զփականս՝ կարճ—հին. նոյնպէս՝ Ամալք հաւատոյ և Երանելի սուրբ առաքեալքն. ապա դարձեալ արձակ—նոր են. Որ արփիահրաշ և Որ անպարագիրն է:* 202 A *ունի:* 1588 *ունի նաև այլ չորս շարական* 35b—38a՝ *արձակ գրութեամբ:*

21. *Կանոն որդւոցն Որոտման՝ սրբոց առաքելոցն Յակոբայ և Յովհաննու.* 6 *շարական. արձակ—նոր են մի միայն Որ էն յէութեան և Որ անմարմին, միացեալը կարճ—հին:* 202 A *ունի:* 1588 *արձակ գրութեամբ ունի նաև երկու այլ շարական* 38b—39a:

22. *Կանոն համօրէն առաքելոցն Քրիստոսի.* 10 *շարական. Զառաջնորդս և զվարդապետս բոլորովին չունի, միացեալը կարճ—հին. ունի այլ երկու շարական՝ մէկը կարճ, միւսն արձակ* 39b. 202 A *ունի:*

23. *Շարական երկոտասանից սրբոց առաքելոցն Քրիստոսի.* 1 *շարական.* 1588 *ունի առանց վերնագրի, այլ եօթանասուն և երկու առաքելոցն կարգի վերջը. արձակ—նոր.* 202 A-B *չունին:*

24. *Կանոն եօթանասուն և երկու աշակերտաց առաքելոց Քրիստոսի.* 6 *շարական. բոլորն արձակ—նոր. դիտողութեան արժանի է, որ Առաքեալք Աստուծոյ շարականի վերջին՝ Աստուածածնին վերաբերեալ Դասք անմարմնոց տունը չկայ ձեռագրում.* 202 A *ոչինչ չունի.* 202 B *լրացրել է, բայց միայն չունի այս Առաքեալք Աստուծոյ շարականը.* 1588 *վերջը՝ ի յանսահմանից առաջ ունի երկու այլ շարական՝ մինն արձակ, միւսը կրճատ* 44a—b:

25. *Կանոն Յօնանու մարգարէին.* 7 *շարական. բոլորն արձակ—նոր.* 202 A *ունի:*

26. *Շարական սրբոյն Սարգսի զօրավարին.* 1 *շարական.* 1588 *կանոն սրբոյն Սարգսի զաւրավարի. Եւ որդւո նորա. Մարտիրոսի.* 46b—50a. *այստեղ* 9 *շարական, որոնցից նախ* 7 *արձակ, ապա մէկը կարճ՝ Զինուորն ̃քի, որ է մեր որդի մարտիրոսաց Ա.Զ-ի մ̃ նիքն.* 608 *էջ. և վերջապէս մեր Ամենասուրբ երրորդութեանն արձակ—նոր.* 202 A *չունի.* B *լրացնում է, բայց միայն մերը:*

27. *Կանոն Բուն Բարեկենդանին.* 6 *շարական. բոլորն էլ արձակ—նոր.* 202 A *չունի.* B *է լրացրել:*

28. *Շարականք Պահոց. Ա.Զ.* 21 *շարական. բոլորը կրճատ—հին.* 202 A *ունի.*

29. *Յառաջին շաբաթու տօն է սրբոյն Թէոդորոսի Եւ առի*

մանկունք. 1 շարական. 1588 չունի. 202 A ունի։

30. Կանոն Երկրորդ կիւրակէին Աղուհացից. 6 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A չունի, B է լրացնում։

31. [Շարականք Պահոց]. ԱԿ. 20 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A.

32. Շաբաթ օր՝ Տօն է սրբոյն Կիւրղի Երուսաղէմի հայրապետի. 1 շարական=1588-ի 198a—b Շարական. Սրբոյն Յոհաննու. և՞ մի հայրա. արձակ—նոր. չկայ 202 A—B.

33. Կանոն Երրորդ կիւրակէին. 6 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A չունի, B է լրացնում։

34. [Շարականք Պահոց]. ԲՁ. 14 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի.

35. [Շարականք Պահոց]. ԲԿ. 23 շարական. 22-ը կրճատ—հին. վերջին կոթատի փոխարէն մի այլ շարական, դարձեալ կարճ, ուրեմն բոլորը կրճատ—հին։ 202 A ունի. կոթատն էլ մերի նման է։

36. Կանոն Չորրորդ կիւրակէին. 6 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A չունի, B է լրացնում.

37. [Շարականք Պահոց] ԳՁ. 21 շարական. բոլորն էլ կրճատ—հին. 202 A ունի։

38. [Շարականք Պահոց] ԳԿ. 9 շարական. բոլորն էլ կրճատ—հին. 202 A ունի.

39. Կանոն սրբոց քառասնից Մանկանցն, որք ի Սեբաստիա կատարեցան. 7 շարական. կրճատ—հին են՝ Այսօր ընդ անմարմնոցն, Այսօր տօնելով, Հրաշափառ ծագումն, Այսօր ցնծան դասք հրեշտակաց, այլ և Լուսապսակացն տօնիւս պայծառացեալ առաջին երեք տունը. արձակ—նոր են միացեալ մէկն՝ Այսօր զանյաղթելի, ինչպէս և Լուսապսակացնի «Այսօր» բառով սկսուող տները. 1588 և 202 A Լուսապսակացնի չորրորդ տնից ինքնուրոյն շարական են համարում։

40. Կանոն հինգերորդ կիւրակէի Աղուհացից. 6 շարական. ամբողջն արձակ—նոր. 202 A չունի, B է լրացնում։

41. [Շարականք Պահոց] ԴՁ. 23 շարական. ամբողջը կրճատ—հին. 202 A ունի։

42. Կանոն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի. 6 շարական. 1588 չունի Այսօր զուարճացեալն ու Լերինքը. միացեալն արձակ—նոր. օրհնութեան տեղն ունի Սոսկալի տեսիլ ած՞ային հրաշիցն 160b—161b և ի հուրէ զարդարեալ հայրական շնորհաւք պըսակեալ 161a-b, վերջն էլ Անճառելի շնորհաւք տուար զաւակ թագէոսի 163b և Ով երջանիկ ս. ք Գրիգոր քաջ և յաղթող հայրապետ 163b. չորսն էլ արձակ են. 202 A ոչինչ չունի. B լրացրել է բացի Այսօր զուարճացեալից և Լերինքից։

43. Կանոն վեցերորդ կիւրակէին. 6 շարական. բոլորն էլ արձակ—նոր. 202 չունի, B լրացնում է։

44. [Շարականք Պահոց] Դկ. և առեղի. 26 շարական. բոլորն էլ կրճատ—հին. 202 A ունի։ Մեսրոպ Մաշտոցի մասին խօսելիս վերև արդէն յիշատակեցինք 1588-ում Ապաշխարութեան կանոնի ներքոյ գրի առնուած այն բոլոր շարականների մասին, որոնք այժմ անգործածական են։

45. Կանոն Յարութեան Ղազարու. 8 շարական. բոլորն էլ կրճատ—հին. 202 A ունի։

46. Կանոն Ծաղկազարդ կիւրակէին յաւուր գալստեան Տեառն յԵրուսաղէմ. 8 շարական. բոլորը կրճատ—հին բացի Որ ի քրովբէականից, որ արձակ—նոր է. 202 A ունի բացի այս վերջինից. B չի լրացնում. 202 A-ի հարցը նոյնն է, ինչ որ 1588-ի կրճատ գրածը. տես վերև բ.

47. Նոյնոյ մեծի ողողմեան Ծաղկազարդի. 4 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A նոյնպէս ունի երկու այլ շարական. տես վերև գ.

48. Կանոն Մեծի Երկուշաբթին. 7 շարական. արձակ—նոր են՝ Անեղն ի հօրէ, Եկայք որդիք մարդկան և Որ յանէից գոյացուցեր, իսկ մնացեալը կրճատ—հին. 202 A ունի։

49. Կանոն Մեծի Երեքշաբաթին. 7 շարական. արձակ—նոր են Իմաստուն կուսանքն և Յորժամ յերկնից փառօքը, մնացեալը կարճ—հին. 1588 ունի նաև երկու այլ շարական արձակ գրութեամբ. 202 A.

50. Կանոն Մեծի Չորեքշաբաթին. 6 շարական. արձակ—նոր են Որ յաթոռ փառաց և Որ խորհրդեամբ, մնացեալը կրճատ—հին. եւ երկու այլ շարականներ, 202 A.

51. Կանոն Մեծի Հինգշաբաթին. 10 շարական. բոլորը կրճատ—հին. եւ մի այլ շարական. 202 A.

52. Կանոն Մեծի Ուրբաթուն. 9 շարական. արձակ—նոր են Այսօր ի կատարումն և Այսօր զոր երկնային լուսեղինացն. մնացեալը կրճատ—հին. եւ երկու այլ շարական. 202 A.

53. Երգ տեառն Ներսիսի Հայոց կաթուղիկոսի, ասացեալ յաղագս մեծի ուրբաթու գիշերի աւետարանացն. 2 շարական. արձակ—նոր են. 202 A չունի, B է լրացնում։

54. Կանոն Մեծի Շաբաթուն Թաղման Տեառն Յիսուսի. 7 շարական. արձակ—նոր են Կենդանին յաւիտենից և Կուսածին մարմնով Քրիստոս, մնացեալը կարճ—հին, կայ եւ երկու այլ շարական. 202 A ունի։

55. Ճաշու Գովեսջք Ցինանցն. 6 շարական. բոլորը կարճ—հին. 202 A.

56. Կանոն սրբոյ Զատկի. 6 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A չունի, B է լրացնում։

57. [Կանոն յարութեան Տեառն] Ա.Ձ. 17 շարական. 1588-ի վերնագիրն է. Կանոն Ա՟ր եւ կենսաբեր յարութ՟ե ան. բոլորը կայ և կրճատ—հին է*.)

58. Կանոն Գիւտամանն Յովհաննու Մկրտչի. 3 շարական. 1588 ունի 78-ի հինգ շարականը կրճատ և ապա այս երեքը. կարճ—հին. 202 A ունի միայն մերը։

59. Կանոն Նոր Կիւրակէին. 6 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A չունի, B է լրացնում,

60. [Կանոն յարութեան Տեառն] Ա.Կ. 17 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի բոլորը։

61. [Կանոն յարութեան Տեառն] ԲՁ. 19 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի բոլորը։

62. Կանոն Աշխարհամատրան կիւրակէին. 3 շարական. կրճատ—հին. ունի նաև մի մեծացուցէ՝ Այսօր ցնծ. դա. ընդհատ. 202 A։

63. [Կանոն յարութեան Տեառն] ԲԿ. 17 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի։

64. [Կանոն յարութեան Տեառն] Գ.Ձ. 18 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի։

65. [Կանոն յարութեան Տեառն] Գ.Կ. 13 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի։

66. [Կանոն յարութեան Տեառն] Դ.Ձ. 22 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A կայ։

67. Կանոն Համբարձման Քրիստոսի. 7 շարական. կրճատ—հին. 202 A. 1588 ունի նաև օրհնութեան մի երրորդ մասն, ինչպէս և երկու մեծացուցէ արձակ գրութեամբ, իսկ 202 A մի այլ մեծացուցէ։

68. Կանոն երկրորդ Ծաղկազարդին. 6 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A չունի, B է լրացնում.

69. [Կանոն յարութեան Տեառն] Դ.Կ. 18 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի։

70. Կանոն Պենտէկոստէին. 8 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A։

71. Կանոն Երկրորդ աւուրն. 5 շարական. բոլորն արձակ —նոր. 202 A չունի. B է լրացրել։

72. Կանոն Երրորդ աւուրն. 5 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A չունի. B է լրացրել։

*) Ա.Ձ—Դ.Կ ճաշուները գրի են առնուած կրճատ ձեւով ո՛չ իրենց համապատասխան տեղը. այլ շատ յետոյ ս. Խաչի գիւտի կանոնի վերջը. 187b—188a.

73. Կանոն Չորրորդ աւուրն. 5 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A չունի, B է լրացրել։

74. Կանոն Հինգերորդ աւուրն. 5 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A չունի. B է լրացրել։

75. Կանոն Վեցերորդ աւուրն. 5 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A և B չունին։

76. Կանոն Եօթներորդ աւուրն. 6 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A և B չունին։

77. Կանոն Ծննդեան Յովհաննու Մկրտչին. 6 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A յաջորդ (78) կանոնի մէջ գրել է տալ այստեղի Մարգարէից գերագոյնն ու Այսօր ցնծայ եկեղեցի շարականները, մնացեալը չունի, իսկ 202 B լրացրել է այս կանոնը բացի սոյն երկու շարականներից։

78. Կրկին Կանոն Յովհաննու Մկրտչին. 5 շարական. բոլորը կրճատ—հին և գրուած 58-ի հետ միասին. 202 A ունի. հմմտ. 77.

79. Կանոն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ. 10 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի։

80. Կանոն Որդւոց և Թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. 4 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A ունի մի միայն մին. Աստուածային հաւատոյ, իսկ B լրացնում է ամբողջը՝ բացի այս շարականից։

81. Կանոն սրբոց մեծին Ներսիսի հայրապետի. 7 շարական. 1588 ունի մի միայն մին. Որ ընտրեցար յԱստուծոյ արձակ—նոր. 202 A-ում կայ նոյնպէս մի միայն այս շարականը. B ոչինչ չի լրացնում։

82. Շարական սրբոյն Սահակայ Հայոց հայրապետի. 1 շարական. արձակ—նոր. 202 A ունի։

83. Կանոն սրբոց Հռիփսիմեանց. 6 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի։

84. Շարական սրբուհւոյ Սանդխտոյ. 1 շարական. կրճատ—հին. ունի նաև 202 A. 1588-ում արձակ գրութեամբ կան նաև օրհ., հարց, ող. և տր. յերկ. բոլորն էլ խորթ մեր արդի Շարականին.

85. Կանոն Տապանակին Տեառն. 6 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի։

86. Կանոն Վարդավառին Առաջնոյ աւուր. 10 շարական. բոլորը կրճատ—հին. 202 A.

87. Կանոն Երկրորդի աւուրն. 6 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A չունի, B է լրացրել։

88. Կանոն Երրորդ աւուրն. 6 շարական. բոլորն արձակ—նոր. 202 A չունի. B է լրացրել։

89. Կանոն Շողակաթին. 6 շարական. 1588 չունի Ուրախ լեր

սուրբ եկեղեցի քանզի և Յորան որբութեան. Մնացեալը կրճատ—հին. 202 A լրիւ:

90. Կանոն Վերափոխման սուրբ Աստուածածնին 6 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A:

91. Կանոն Երկրորդ աւուրն. 6 չարական. բոլորն արձակ—նոր. 202 A ունի.

92. Կանոն Երրորդ աւուրն. 6 չարական. բոլորն արձակ—նոր. 202 A.

93. Կանոն Նաւակատեաց սուրբ խաչին. 6 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A:

94. Կանոն Վերացման որբոյ խաչին. Առաջին աւուրն. 8 չարական. առաջին վեցը կրճատ—հին, Խաչի քո Քրիստոս արձակ—նոր. Փառք սուրբ խաչին մասամբ արձակ և մասամբ կրճատ. 202 A.

95. Կանոն Երկրորդ աւուրն. 5 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A.

96. Կանոն Երրորդ աւուրն. 2 չարական. Խաչն կենարարը կրճատ—հին, իսկ Սրբութիւն որբոյն արձակ—նոր 180a—181a. այս չարականը չկայ 202 A-ում. B լրացրել է:

97. Կանոն Չորրորդ աւուրն. 4 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի:

98. Կանոն Հինգերորդ աւուրն. 2 չարական. Անպատումն կառք անքննելին կրճատ—հին, իսկ Այսօր ցնծան դասք հրեշտակայն արձակ—նոր. 202 A ունի:

99. Կանոն Վեցերորդ աւուրն. 5 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի:

100. Կանոն Եօթներորդ աւուրն. 7 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի:

101. Կանոն Վարագայ սուրբ խաչին. 6 չարական. կրճատ—հին են. Նշանաւ ամենայաղթ խաչիւդ քո, Խաչ քո եղիցի մեզ ապաւէն, Քեզ Քրիստոսի և Հրաշափառ տեսութիւն, իսկ արձակ—նոր Հարցը և մեծացուցէն. 202 A ունի:

102. Կանոն Գիւտի սուրբ խաչին. 7 չարական. կրճատ—հին են. Հրաշակերտ և զօրեղ, Որ փափագելի տենչմամբ, Երանելի աստուածասէր սուրբ դշխոյն, Այսօր խնդրի պատուական փայտ խաչին և Ապաւինեցաք, որ ունի նաև մի տուն Զ-ով. արձակ—նոր են Անճառելի երեւումն և Որ զնախնեայն առիթ մահու. Ապաւինեցաքն ունի նաև Զ-ով սկսուող տուն դարձեալ կրճատ գրութեամբ, այլև է—Բ-ով սկսուող տներ արձակ գրութեամբ 185a—186b: 202 A ունի:

103. Կանոն Սրբոց Մարգարէիցն. 6 չարական. բոլորն արձակ—նոր. 202 A այստեղից ունի մի միայն Որ զաստուածային զօրութիւնդ քո և Որ առաքեցեր նախընթաց քում գալստեանդ, որոնք

գրի են առնուած որպէս օրհնութիւն յաջորդ 104 կանոնի. B լրացրել է սոյն կանոնը բացի այս երկու չարականներից։

104. Այլ հարց սրբոց Մարգարէից. 5 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A ունի և սոցա հետ էլ գրի է առել 103 կանոնի օրհնութեան մասերը։

105. Կանոն սրբոց Թարգմանչացն. 6 չարական. արձակ—նոր են Որք զարդարեցին և Որք թագաւորաց. մնացեալը կրճատ—հին. 202 A ունի։

106. Կանոն սրբոյն Յակովբայ Մծբնայ Հայրապետին. 6 չարական. բոլորն արձակ—նոր. 202 A։

107. Կանոն մանկանցն Բեթղեհեմի. 4 չարական. բոլորն արձակ—նոր. 202 A չունի, B է լրացրել։

108. Կանոն սրբոց Հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի և ամենայն երկնային զօրացն. 6 չարական. բոլորն արձակ—նոր. 202 A։

109. Կանոն սրբոց Հայրապետացն. 7 չարական, որոնցից հինգն արձակ—նոր են, Այսօր երկնայնոցն ընդ մեզ՝ չկայ, իսկ Ով հրաշալին կրճատ—հին է. վերջինս ունի նաև Տեառ, Աստանօր և Գեղեցիկ չառուից տները՝ դարձեալ կրճատ գրութեամբ. 202 A։

110. Շարական Իգնատիոսի Հայրապետին. 1 չարական. արձակ—նոր. 202 A-ում 130-ի և 131-ի մէջ թերթեր են ընկած, ուստի և զուրկ ենք հնարաւորութիւնից վկայութիւն բերելու սոյն համարակարգութեան 110—124-ի մասին։ 202 A ? 202 B չունի.

111. Շարական սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին. 1 չարական. արձակ—նոր. 202 A?, B չունի։

112. Շարական սրբոյն Բարսղի Հայրապետի. 1 չարական. արձակ—նոր. 202 A ?, B չունի։

113. Շարական սրբոյն Գրիգորի Աստուածաբանին. 1 չարական. արձակ—նոր. 202 A ունի։

114. Շարական Նիկողայոսի Հայրապետին. 1 չարական. արձակ—նոր. 202 A ունի։

115. Շարական սրբոյն Եփրեմի. 1 չարական. արձակ—նոր. 202 A ունի։

116. Շարական սրբոց Եւստաթեոսեանց. 1 չարական. արձակ —նոր. 202 A ունի.

117. Շարական երկուց Բիւրուցն. 1 չարական. արձակ—նոր. 202 A ունի։

118. Շարական Ստեփաննոսի Ուլնեցւոյն. 2 չարական. արձակ—նոր. Մարտիրոս և վկայ Քրիստոսին գրուած է ոչ այստեղ, այլ Նախավկայի կանոնի մէջ 34b. համմտ. վերև 19։ 202 A ?, B չունի։

119. Շարական Միւռոնի օրհնելոյ. 1 չարական. 1588 չունի.

202 A ունի։

120. Մեղեդի Մեսռոփի ի վերայ Նորածնելոյն. 1 չարական. 1588 չունի. 202 A չի ունեցել. B է լրացրել։

121. Շարական զգեստու Պատարագին. 1 չարական. 1588 չունի. 202 A ?, B չունի։

122. Շարական ընծայաբերութեան որոց Պատարագին. 1 չարական. արձակ—նոր. 202 A չի ունեցել, B լրացնում է։

123. Շարական եօթն խոստաճարակացն. 1 չարական. 1588 չունի. 202 B չունի. հաւանօրէն չի եղել նաև 202 A-ում, որ ձեռքն է գրի առնում 222 a-ից։

124. Շարական որոց Սուքիասեանց. 1 չարական. կրճատ—հին. չկայ 202 A—B. հաւանօրէն A-ում եղել է, այժմ թերթեր են ընկած. 190 և X ունին։

125. Շարական Վահանայ Գողթնացւոյն. 1 չարական. կրճատ—հին. 202 A ունի։

126. Շարական Դաւթի Դունեցւոյ. 1 չարական. կրճատ—հին. 202 A։

127. Շարականք Կիրակոսի և Յուղիտայի. 2 չարական. առաջինը կրճատ—հին, իսկ երկրորդն արձակ—նոր. 202 A։

128. Շարական Մինասայ, Երմոգինեայ, Գրաբոսի. 1 Շարական. չկայ ոչ 1588-ում և ոչ 202 A—B.

129. Շարական որոց Ոսկեանց. 1 չարական. կրճատ—հին. 202 A.

130. Շարական որոց Սատիմանց. 1 չարական. կրճատ—հին. 202 A։

131. Շարական որոց Վարդանանց. 2 չարական. առաջինը կրճատ—հին, իսկ երկրորդն արձակ—նոր. 202 A.

132. Կանոն որբոց Ղեւոնդեանց. 8 չարական. 1588 Շարական. Ո՞ր ք՞ահիցն. Ղեւոնդեանց. Ան՞ութի՞։ վերնագրի տակ ունի միայն նախ՝ Անճառելի բանդ Աստուած, արձակ—նոր, ապա՝ Պայծառացան, կրճատ—հին, յետոյ՝ Ած՞ախն օրհով յցեալ երանեալ վկայքն, արձակ—նոր, այժմ անգործածական, և վերջապէս՝ Երգեմք ձեզ երգս, կրճատ—հին. ուրեմն արդի չարականներից մի միայն երեքը։ 202 A-ում կան մի միայն Պայծառացան և Երգեմք. B ոչինչ չի լրացնում։

133. [Երգք վասն եօթն աւուրց արարչութեան] 2 չարական՝ Նորաստեղծեալ բանն յանէից և Արարչական բանին հրաման. արձակ—նոր. 202 A-ում չկայ, B է լրացնում։

134. Երգք արեւագալին. 4 չարական. արձակ—նոր. 202 A ունի, բացի Ճգնաւորք Աստուծոյ և Ժառանգորդք երկնից, որոնք լրացնում է ոչ B, այլ C, նոր ձեռքը։

135. Երգք երրորդ, վեցերորդ և իններորդ ժամուց աւուրն. 2 չարական՝ Օրհնեմք զքեզ հայր անսկիզբն և Նահապետին Աբրահամու հայցմամբ. արձակ—նոր. 202 A չունի, B է լրացրել։

136. Երգք երեկոյեան ժամու խաղաղականին. 2 չարական. արձակ—նոր. 202 A չունի, B է լրացնում

137. Կանոն համօրէն մարտիրոսաց. ԱՁ. 13 չարական. 12-ը կրճատ—հին. Լոյսդ որ յառաջ արձակ—նոր. Զինուորն Քրիստոսի գրի է առել կրճատ ս. Սարգսի կանոնի մէջ 49 a. 202 A.

138. Նոյն կանոնի ԱԿ. 11 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A.

139. Նոյն, ԲՁ. 10 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A.

140. Նոյն, ԲԿ. 12 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A.

141. Նոյն, ԳՁ. 12 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A.

142. Նոյն, ԳԿ. 9 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A.

143. Նոյն, ԴՁ. 14 չարական. 13-ը կրճատ—հին. Ով սուրբ Գէորգ չկայ. 202 A.

144. Նոյն, ԴԿ. 13 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A.

145. Կանոն համօրէն ննջեցելոց ի Քրիստոս. ԱՁ. 6 չարական. 5 կրճատ—հին. Զհոգիս ծառայից քոց արձակ—նոր. 202 A.

146. Նոյն, ԱԿ. 5 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A.

147. Նոյն, ԲՁ. 5 չարական. բոլորը կրճատ—հին. 202 A.

148. Նոյն, ԲԿ. 13 չարական. 9-ը կրճատ—հին. չկան սաղմոսերգ Պատրաստ արարեր և Սարաափիլի որոտմամբ, իսկ Ի գալըստեան Տեառն և Գայ զօրութեանց թագաւորն արձակ—նոր. 202 A չունի Ի գալստեան, Գայ զօրութեանց թագաւորն և Սարաափիլի որոտմամբ.

149. Նոյն, ԳՁ. 9 չարական. 7-ը կրճատ—հին. Արարչագործ Աստուած որ յոչնչէ արձակ—նոր. Քրիստոս Աստուածի առաջին երեք տունը կրճատ—հին, իսկ Արեգակն արդարութեանց սկսած արձակ—նոր. 202 A չունի այս վերջին արձակ գրուած տները, Քրիստոս Աստուածն ունի միայն երեք տուն։

150. Նոյն, ԳԿ. 8 չարական. 5-ը կրճատ—հին, իսկ Փառք քեզ Աստուած, Ընդ զուարթունս երկնից և Լեառն վիմածին արձակ—նոր. 202 A չունի այս արձակ գրուածները. B լրացրել է առաջինն ու վերջինը։

151. Նոյն, ԴՁ. 17 չարական. առաջին 8-ը կրճատ—հին, իսկ Միացեալ 9-ը՝ սկսած Հայր անսկիզբն արարիչ յաւիտենից չարականից արձակ—նոր. 202 A չունի վերջին 7-ը. B լրացնում է Բաղմերանքը և Զահագինը։

152. Նոյն, ԴԿ. 12 չարական. բոլորը կրճատ հին բացի Որ ի հօրէ առաքեցարի, որ արձակ—նոր է. այս վերջինը չկայ 202 A-ում, B է լրացնում։

153. *Տեառն Ներսէսի տաղեալ վասն ննջեցելոց.* 3 *չարական. երկուսն արձակ—նոր. իսկ Նա տացի ի վերանալ յինէն մինչև վերջը չկայ.* 202 A—B *ոչինչ չունին։*

154—161. *Կարգ օրհնութեանց Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ԱՁ—ԴԿ.* 8×10=80 *չարական. բոլորը կրճատ—նոր.* 202 A *ունի։*

162. *Աւետիք գերարփին.* 1 *չարական. չկայ ոչ* 1588-*ում և ոչ* 202 A—B-*ում.* C *է լրացնում։*

Այս ամենայչափան բաղդատութեան արդիւնքը կարելի է ամփոփել հետեւեալ կերպով. մեր արդի 1166 շարականներից ԺԴ—ԺԴ դարի մի աւանդութիւն կամ սոյն համար 1588 ձեռագիրը 862-ը կամ ամբողջի մօտ երեք քառորդը համարում է հին, այսինքն Ներսէս Շնորհալուց առաջ գրուած, իսկ մնացեալ 304-ը կամ ամբողջի մի քառորդից մի փոքր աւելին նոր են, այսինքն Ներսէս Շնորհալու, իւր ժամանակակիցների եւ յետնորդների գործ։

*Կը շարունակուի.* **Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեան**

## ՆԱԽՆԵԱՑ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

### Դ.

*Բայց մեր առանձին ուշադրութիւնն են գրաւում աւետարանի գեղարուեստական զարդարանքների մնացորդները. Ձեռագրի սկզբում եղած խորանազարդերն ու աւետարանիչների պատկերներն իրենց սկզբնազարդերով եթէ մնացած լինէին, հայ մանրանկարչութեան լաւագոյն և հնագոյն յիշատակարաններից մէկը կունենայինք։ Տարաբաղդաբար, ինչպէս և վերև ակնարկուեցաւ, ժամանակի և տգիտութեան զոհ են գնացել պատկերների մեծագոյն մասը։ Անկորուստ պահուած պատկերն ու զարդերը հետևեալներն են.* 82բ. *Մարկոս աւետարանիչ,* 83ա. *Մարկոսի սկզբնազարդն ու առիւծը,* 135ա. *Ղուկասի սկզբնազարդը։ Լուսանցազարդեր առհասարակ չունի մեր աւետարանը. միայն Յովհաննու մէջ սկսում են երկգոյն՝ փոքրիկ զարդեր, կանաչ և կարմիր գոյներով եռանկիւններ, մեծ մասով հորիզոնական խարսխի վրայ. երբեմն նրանք զոյգ են և*